ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ info@jrar.am

«30» 01 2025 թ. ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում Գնահատող հանձնաժողովի 13.01.2025 թվականի N3 արձանագրությունը՝ «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊ Ընկերությունը (այսուհետ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. Ներկայացված փաստերը և պահանջը.

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-25/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով Ստորին Հրազդանի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի 09.01.2025 թվականի N 2 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալը.
ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-25/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«ՀՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ
2	«Ռիջիդ» ՍՊԸ
3	«Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ
4	ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ
5	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ

Վերոնշյալ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություն) կողմից յուրաքանչյուր բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին կազմվել է արձանագրություն՝ ըստ որի այդ թվում նաև «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով սահմանված շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիայի «Հիդրոտեխնիկական կառույցներ (հիդրոտեխնիկական համակարգեր,

հիդրոէներգետիկ կառույցներ)» ներդիրը և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի դրույթների հիմքով, գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակիցներին այդ թվում նաև Սերպանտին Ինժենիրինգ» ՍՊԸ-ին ծանուցել՝ մեկ աշխատանքային օրում ներկայացնել պակասող փաստաթղթերը, որը «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» Ընկերության կողմից չի ներկայացվել:

ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-25/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով Ստորին Հրազդանի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման Գնահատող հանձնաժողովը հայտերի անհամապատասխանությունների շտկման նիստի 13.01.2025 թվականի N 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է պարտադիր ներկայացման ենթակա շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիայի «Հիդրոտեխնիկական կառույցներ (հիդրոտեխնիկական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ)» ներդիրը, ինչի հիմքով էլ «Սերպանտին Ինժենիրինգ» Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

2.Էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՊՁԲ-24/4 ծածկագրով առանցքակալների ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգով մասնակցության հայտ են ներկայացրել՝

1.1«ՀՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ն,

1.2. «Ռիջիդ» ՍՊԸ -ն,

1.3. «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն,

1.4. «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ -ն,

1.5. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ -ն:

2. ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-25/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով Ստորին Հրազդանի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի 09.01.2025 թվականի N2 արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով սահմանված շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիայի «Հիդրոտեխնիկական կառույցներ (հիդրոտեխնիկական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ)» ներդիրը և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի դրույթների հիմքով, գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակցին ծանուցել՝ մեկ աշխատանքային օրում ներկայացնել պակասող փաստաթղթերը, որը Սերպանտին Ինժենիրինգ» Ընկերության կողմից չի ներկայացվել:

3. ՀՀ ՏԿԵՆ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-25/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով Ստորին Հրազդանի ջրանցքի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի անհամապատասխանությունների շտկման նիստի 13.01.2025 թվականի N3 արձանագրությամբ «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

3.Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը

Ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի հայտերի անհամապատասխանությունների շտկման նիստի 13.01.2025 թվականի N 3 արձանագրությունը և կից փաստաթղթերը հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով

և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: **Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա**: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: **Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:**

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, **կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը՝ դրանք համադրելով առկա ապացույցների հետ արձանագրում եմ, որ ՀՀՏԿԵՆ-Ջ-ՀԲՄԽԾՁԲ-25/2 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» Ընկերության հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Գնումների օրենսդրությունը կարգավորող իրավանորմերի պահանջներին, որն էլ հանգեցնում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետովվ սահմանված գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանված պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «ՍԵՐՊԱՆՏԻՆ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (**ՀՎՀՀ՝ 06938006, գործունեության հասցե՝ ք.Վանաձոր, Մաշտոցի փ. 8/1)** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.. Սույն որոշման օրինակը ուղարկել մասնակցին և ՀՀ Ֆինանսների նախարարություն:

3. Որոշումը կարող է բողոքարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ այն ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում:

4. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

ՏՆՕՐԵՆ՝ **Ա. ԱԲԳԱՐՅԱՆ**